

Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Ընկերություն: «ՀԱԱԳ» ԱՓԲԸ

Աշխատանքային
գրաֆիկ: Լրիվ դրույք

Դիմումների
ընդունման
սկիզբ: 18.01.2022թ.

Աշխատանքային
փորձ: 3 տարի

Դիմելու
վերջնաժամկետ: 27.01.2022թ.

Աշխատատեղի նկարագրություն.

1. SS բաժնի պետն իրականացնում է.
 - SS բաժնի աշխատանքների կազմակերպում և համակարգում,
 - SS բաժնի գործունեության տարեկան պլանի մշակում,
 - SS բաժնի տրված հանձնարարականների կատարման արդյունքների հաշվետվությունների և այլ փաստաթղթերի պատրաստում,
 - Ավտոմատացված համակարգերի և համակարգչային ցանցերի անվտանգության միջոցառումների աշխատանքների իրականացում,
 - Բոլոր համակարգերին օգտագործման իրավասությունների տրման (user), դրանց փոփոխությունների նկատմամբ իրականացվող աշխատանքների իրականացում և հսկում,
 - Ցանցերում շրջաբերվող տեղեկատվության, տվյալների բազաների ծածկագրման աշխատանքների հսկում,
 - Համակարգչային ցանցերում արտակարգ իրավիճակների բացահայտման, կանխման աշխատանքների իրականացում և հսկում,
 - Ավտոմատացված համակարգերի անվտանգության միջոցառումների շուրջ մշակվող ընթացակարգերին մասնակցություն,
 - Տեղեկատվության, ծրագրային միջոցների պահպանման, արխիվների և դրանց վերականգման աշխատանքների իրականացման ղեկավարում,
 - Ձեռքբերվող կամ մշակվող կիրառական ծրագրերի համար անհրաժեշտ անվտանգության պահանջների ձևակերպում,
 - Ինտերնետային սահմանաչափ և էլեկտրոնային փոստի տրամադրում և դրանցով շրջանառվող տեղեկատվության հսկում,
 - Մասնակցություն ձեռքբերվող կամ մշակվող կիրառական ծրագրերի թեստավորմանը,
 - SS բաժնի համար նոր աշխատողների համալրման հետ կապված հարցազրույցի անցկացում,
 - Ռազմավարական խնդիրների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
 - SS բաժնի բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ նյութերի և տեղեկությունների ձեռք բերում,

- Կիրառվող համակարգի օգտագործողներին դրա կիրառման անվտանգության կանոնների պահպանման պահանջի ներկայացում,
- Վերոնշյալ անվտանգության կանոնների խախտման դեպքերում՝ համապատասխան պատժամիջոցների կիրառման նպատակով, դրանց արձանագրում
- Ընկերությունից տեղեկատվական արտահոսքը կանխելու համար համապատասխան միջոցառումների ձեռնարկում,
- Օգտագործողների կողմից ցանցում այնպիսի ծրագրերի կիրառման արգելում, որոնց հետևանքով կարող են տեղ գտնել դեպի Ընկերության ցանց չարտոնված մուտքեր, կամ նմանօրինակ արգելքի խախտման դեպքում՝ օգտագործվող ծրագրի անհապաղ բլոկավորում,
- Արտակարգ իրավիճակների կանխման նպատակով սերվերների և համակարգի անհապաղ բլոկավորում,
- Ընկերության ցանցի ապարատածրագրային միջավայրի փոփոխման փորձերի արգելում և դրանց անհապաղ կանխում,
- Ընկերության սերվերներում և համակարգիչներում պահպանվող տեղեկատվության հետազոտում,
- Ընկերությունում կիրառվող ծրագրային ապահովման սպասարկում:

Տևողություն: Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

Պահանջվող որակավորումներ և հմտություններ:

- Բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում
- 3 տարվա աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
- Windows օպերացիոն համակարգերի իմացություն
- Microsoft Office ծրագրային ապահովման իմացություն, ներդրման և խնդիրների լուծման փորձ
- Համակարգչային ցանցերի կարգավորման և անխափան աշխատանքի ապահովման փորձ
- Ընկերության կայքի ընթացիկ թարմացման և հսկման փորձ
- SS սարքավորումների ներքին կառուցվածքի և սպասարկման գիտելիքներ և փորձ
- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն
- Թիմում աշխատելու հմտություն
- Լեզուների իմացություն (Հայերեն - գերազանց, Անգլերեն – լավ, Ռուսերեն – լավ)

Դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրական (CV) info@eia.am էլ. փոստի հասցեին, նամակի վերնագրում (Subject) նշել «Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ»: